

ՊԵՆԱԿ

LE DANUBE

ՀԱՆՊԵՆԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԵՆԱԿ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն երկրի համար տարեկան 12 ֆր. կամ 5 լուսնի թիթագրամ:

Պարսկաստանի համար տարեկան 8 ֆր. կամ 3 լուսնի թիթագրամ:

Փոստի ծախքը խմբագրությունն էր վճարել:

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Մանուկյան տար 50 տանիթ է: Հայերեն Պուլկարե-
լեն և Ֆրանսերեն լեզուով:

Խմբագրությունն զրկուած համակ կամ պրուծիւն ետ
չ'արուիր:

Նամակ եւ ծրար պէտք է զրկել հետեւեալ հասցէով:

M. S. TUTUNDJIEFF

Rédacteur du journal "TANOUF"

(BULGARIE)

ROUSTCHOUK

Պատիւ ունիմ ծանուցանել Բուսնուգի բոլոր
բարեկամաց թէ ըստ սովորութեան Ս. Զատիկի
տօնի առթիւ ժամանուոր այցելութիւնք չ'պիտի
տամ, եւ այս առթիւ 'ի նպատակ տեղեւոր իզական
սեռի Ս. Հռիփսիմեանց վարժարանի կը նուիրեմ
10 ֆրանք:

Արթին Երամօֆ

3 Ապրիլ 1892

Բուսնուգ.

ԽԱՍՊՈՎՈ, ԱՐԵՎԵԼԵԱՆ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ.

ԵՒ ԿԱՄ

ԽԱՍՊՈՎՈ, ԱՐԵՎԵԼԵԱՆ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ.

Այստեղի Հայ գաղթականութիւնը կ'սկսի 1878
թուականին այն է Ռուսաց Պուլկարիան գրաւե-
լէն 'ի վեր, եւ ա՛մ ըստ ամէ տճեւով պիտի (1892)
ընդ ամենը քսան եւ երեք(23) ընտանիք կայ, մե-
ծագոյն մասը գաղթած է Ա. Պօլսէն:

Սոյն 23 ընտանիք զանազան արհեստ եւ զբաղ-
մունքով կ'ապրին, ահա թէ ինչպէս երկու երկ-
րագործ (Ռոստոյթոյի) երեք երկաթագործ, երեք
գարբին, երկու ոսկերիչ, երկու կօշկակար, մէկ
չղուականագործ, երկու ժամագործ, մէկ օթոցա-
րար որ եւ մուշտագործ, (անգործ վաճառ ծերու-

թեան) չորս սափրիչ վարսավիրաց, երկու յանձ-
նակատար, մեկ աղահաւայ եւ ըստ պարագային
չատ մը աղբանայ բուսնու հարուստ վաճառա-
կան, երկու վաճառական կերպասեղինաց եւ երեք
գարձեալ չկերպասեղինաց հանգերձնորածեւութեանց
Պէն Կրէն, եւ մեկ վաճառական ալ մեծաքանակ
կերպասեղինաց "Պէն Կրէն, երեք կառավարու-
թեան պաշտօնատար, Տօգթ. Սարգիս Ֆինճանճեան
Կ. Պօլսեցի գաւառացին բժիշկ. Յակոբոս Գանիթար-
եան (Փ. Պօլսեցի) հեռագրատան պաշտօնեայ թ.
կարգի, եւ երրորդը Յարութիւն Ս. Փաղարճըզցի-
եան (Ա. Պօլսեցի) թարգման զրագիր գաւառացին
գաւառացի մօտ:

Ասոնցմէ միայն թէ ութը ընտանիք իրենց սեփ-
հական տուն ու այգի ունին եւ առ հասարակ բա-
րեկեցիք են. տարւոյն ձմեռուան եղանակին մեկ
երկու ընտանիք երբեմն օգնութեան կը կարօտին
չքաւորութեան պատճառաւ, զ'որ ծածկարար կը
օգնեն մի քանի բարեսիրտ ընտանիք:

Եկեղեցի եւ քահանայ չ'ունինք եթէ պէտք լի-
նի յատուկ հրաւիրմամբ գալով Ա. Պօլսէն կը կա-
տարէ իւր պաշտօն, Մկրտութիւն եւ յուղարկաւո-
րութիւն (որ խիստ հազուագիւտ է. վաճառի գիւ-
ղաքաղաքս բուսնու քաջաւոյճ կլիմայ մ'ունի
եւ թէ Հայք աւելի կը զնահատեն եր'բ, ինչպէս

և որքան ուսել պէտք է և միանգամայն ամենափոքր հիւանդութեան մը համար ժամանակին բժիշկի կը դիմեն և զիտեն հիւանդ պահել։)

Երբեմն Մկրտութեան արարողութիւնը կը կատարուի Պուլկարաց և Յունաց եկեղեցւոյ մէջ նորանց հոգևոր պաշտօնէից ձեռօք և միշտ կնքահայրը զուտ հայ լինելով և երեխայի դրուած անունն ալ հայկական. իսկ գարով հաղորդութեան երբէք նոցա միջոցաւ, այլ միշտ Հայաստանեայց Եկեղեցւոյ հայ Քահանայի ձեռօք կը կատարուի։

Այս անգ ոչ մի այցելու հովիւ չէ եկած, աւելի լաւ կը լինի ասել չէ զրկուած. եթէ պէտք ունենամք կը խնդրեմք Ա. Պօլսոյ Ս. Առաջնորդէ և նա կը յղէ մի Քահանայ, Տեղւոյս Ժողովուրդը փոքրիկ մատուռ մը կառուցանելու և մի յատուկ Քահանայ ունենալու փափաքը ունի. յայնժամ կը յուսացուի նաև այժմեան ծաղկոցը վերածել գպրոյի։

1883ին «Դաստիարակասէր», անուամբ մի ընկերութիւն կազմուեցաւ որուն նպատակն էր մի ծաղկոց բանալ հայ մանկուոյն գէթ ընթերցանութիւն մի ուսանելու համար. ընկերութիւնը ունէր 30 չափահաս անդամ քառասուն բաժնով, իւրաքանչիւրը 30 սանդիւմ ամսական բաժին կը վճառէին (ցաւալի է որ սոյն բարեհապատակ ձեռնարկութիւնը փոխանակ առաջ երթալու ետ ալ մնացած է ոմանց անտարբերութենէն) ընկերութիւնը երկու տարի չի բոլորած յաջողեցաւ մի տնակ ալ քնել յորում իբր ծաղկոց չորս տարիէ 'ի վեր 20 — 25 երկու սեռէ տղայք կը յաճախեն. (միշտ առաւելութեամբ արական սեռի) և ուր հասարակ ընթերցանութիւն, Քրիստոնէական, Սրբազան պատմութիւն, Գրաւարժութիւն, և թուարանութիւն չորս գործողութեան վերայ. իդական սեռի համար ալ ասղնեգործութիւն. որոնք կ'ուսանդուին և կ'ուսուցուին 'ի ձեռն Օր. Իմաստիկ Մկրտիչեանի (Ա. Պօլսեցի որ հոն առած է իւր միջակ ուսում ու կրթութիւն և որ բաւական հասակէ, վարժուհւոյ վարձքը կը հայթայթուի ծաղկոց յաճախող աշակերտաց կամաւոր (քանակութիւնը տղայոց ծնողքը կորուչէ) ամուսկաններէ և մասամբ ալ ընկերութեան անտուկէն որ հազիւ թէ ամբողջութեամբ 35 — 40 ֆրանք կը հոգացուի։

Այն օրէն երբ բացուեցաւ սոյն ծաղկոց, օտար գպրոյներ յաճախող չը մնայ՝ որոնք արդէն 2 — 3 հոգի էին։

Կառավարութիւնը բաւական համակիր է մեզ հայոցս քան թէ ուրիշ ոչ Պուլկար ազգաց հետ։

ԽԱՍԳԻԻՂԷՆ (տեղէս) 14 հազարամեթր հեռաւորութեամբ «ԳԱՅԱՃԸՔ», անուանի երկաթուղոյ կայարանի մօտ 30ի չափ հայ պանդուխտներ կան սոքա վանայ և Մշոյ գաւառի գիւղերէ են եկած և կը պարապին արմտեաց բեռնակրութեամբ, գրեթէ տարւոյն՝ մասին մէջ կանոնաւոր կը նիհաշ իսկ 1/3 մասին մէջ պարապ ըսելու չափ աննշան գործերով կը զբաղին, որոնց մէկ տասներորդը ամուրի է իսկ մնացեալ մասը ամուսնացեալ և զաւակաց տէր 'ի հայրենիս, որոնցմէ հետզհետէ զառնաղէտ նամակներ կը տեղան և նիւթական օգնութիւնն կ'ակնկալեն, հայ մշակայ միջակ շահածին օրական կրնայ լինիլ 2 ֆրանք, երբեմն 2 1/2 իսկ բացառաբար երեք ֆրանք ալ, խեղճ ու կրակ կ'ապրին օրական մէյ մեկ ֆրանք ծախսելով իւրաքանչիւր։

Երկաթուղոյ գծին վրայ ինչպէս Թըռնօլօ — Սէյմէն, Խարմանլի, դարապունար, Եանպօլի ևն. կան բաւական արմտեաց վաճառականներ, կառ. պաշտօնեաներ և թէ գաւառացի հայ մշակներ։

Խասգիւղ (Պուլկարիս)

14/26 Յունի. 1892

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

ՄԻ ՀԱՐՑ ԱՌ. ՀՈԳԵՒՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ

Յարգելի պ. Խմբագիր.

«Դանուբ» ի էջերում ընթերցանք Տաճկահայոց Պատրիարք Գեր. Աշքըեանի մի տնօրէնութիւնն յանձին Լուսինեան Խորէն Սրբազանի, բայց դա անօրէնութիւն է ճշդիւ և ոչ թէ տնօրէնութիւն, զի մի կղերականի պատժելու համար պէտք է նորա վերայ մի յանցանք գտնել և այն էլ մի ծանր յանցանք, Ս. Եկեղեցւոյ օրինաց հակառակ պէտք է վարուած լինի մի կղերական, որպէս զի արժանաւոր համարուի պատժի։

Արդ Լուսինեան Խորէն Սրբազան ինչ յանցանք ունեցել է. Հայաստանեայց ծիսից և արարողութեանց դէմ մեղանջել է. ոչ, եկեղեցական կարգաց և օրինաց դէմ մի զեղծում արել է. ոչ, ուրեմն ինչ է արել, իբր թէ Սուրբանի պալատից գտողներ հաղորդել է իւր եղբորորդւոյն 'ի Բարիդ, որուն «քաղաքական յանցանք» անունը կուտան եթէ ստուգիւ յանցանք է, և Ուղթանին անկ էր, յանցաւոր ճանաչել զՍրբազանն և օրինաց պահանջը գործադրել, իբր իւր հպատակն։

Բայց երբ նորին վեհափառութիւնն ներել է, մի Պատրիարք Աշքբեանի սփ է տուել իրաւունք այդ անօրէնութիւնը անելու Լուսինեանի նման մի Արքեպիսկոպոսի համար. սա ցոյց է տալիս Աշքբեանի ունեցած հակակրօթիւնը, սկը գէպի Լուսինեանն: Վաղուց է արդէն որ Պատրիարքի սրտում խճուկեալ էր սասելութիւն գէպի Խորէն Սրբազան ինչ ինչ պատահարաց մասին, յորս խոյտառակուել էր Աշքբեան արդար յանդիմանութեամբ Լուսինեանէ, ուրեմն մի առիթ էր սրտում որ հրապարակաւ իւր սրտի դառնութիւնը դուրս թափէ, և այն առիթն ներկայացած հաւարեց Լուսինեան Սրբազանի կաթնեցեալ քաղաքական յանցանքն:

Բայց մեր մաքում ծաղում է մի հարց, ինչ իրաւունք ունի (որ սոսկ մի «Արքեպիսկոպոս» է) արդկիւ մի ուրիշ Արքեպիսկոպոսի ժամտապալութիւն: Ա. Պատարագ և այլն: մի միայն վեհափառ Հայրապետն կարող է մի եպիսկոպոսին պատժել. նա էլ եկեղեցական ժողով զուամարեալ:

Ամենախոնարհաբար մեր հոգեւոր բարձրագոյն Իշխանութեան ուշագրութիւն հրաւիրում եմք այս կարեւոր հարցի վերայ. սա մի սկզբունքի խնդիր է և ոչ թէ սոսկ մի անձի. հետաքրքիր էինք խնայալ թէ Ա. Սինոդի կամ Սրբազան Կաթողիկոսական տեղակալի կողմից արդեօք մի յանդիմանագիր ուղղուած է Տաճկահայերի Պատրիարքին սրը յանդգնել է իւր սահմանից դուրս գալ. և միջամտել մի միակ ընդհ. Հայրապետի իրաւասութեան ենթարկել մի խնդրի. սրտիսն է մի եպիսկոպոսի պատժելն և այն էլ յանիրաւի:

Խոնարհաբար խնդրում եմք նաեւ երազացի և Ռուսաստանի բոլոր մեր լրագրաց պ. խմբագիրներին բարեհաճիլ պատասպել մեր այս խոնարհ հարց և հրաւիրել առ այն մեր հոգեւոր կառավարութեան ուշագրութիւնը:

Լիան Մատուրեանց

Ի նոր Զոգա

Սպահան

4383 Մեհեկան 5

1892 Փետր. 11.

Կ. Պոլիս 28 Մարտ. 1892.

Հռչակաւոր Աշքբեան Պատրիարքը դեռ կը շարունակէ իր շահատակութիւնները, Պոլսոյ Հայ մամուլը չէ կարող ու և է մի փոքր քննադատութիւն ընել իր արարքների գէմ. խեղճը յոյս ունի թէ զինքը Կաթողիկոս պիտի ընտրեն, մի քանի

Հայ թերթերու յողումները որոնք որ կը մեղադրեն Կաթողիկոսական հարցին և թիկնածունքին այդ յողումներէր կը խմբագրուին Պոլսոյ անարժան Պատրիարքի մօտ, մասնաւորաբար «Արեւիք» լրագիրը որուն խմբագրութիւնը չէ կարող ոչ մի յողումած տպագրել այդ ամենակարեւոր և փափուկ հարցի մասին, առանց գրաքննիչ Աշքբեանի գիտութեան: Ժողովուրդը ծայր աստիճան գրգռուած է Պատրիարքի գէմ:

Կաթողիկոսական ընտրութեան առթիւ Ա. Էջմիածին պիտի գնան հեռեեալ եկեղեցական և աշխարհական անձնաւորութիւնք իրրեւ ներկայացուցիչ վստն ընտրութեան վեհ. Կաթողիկոսի ամենայն Հայոց:

Կ. ՊՕԼՍՈՅ թեմի կողմանի եկեղեցական պատգամաւոր Մալաքիա Եպիսկոպոս Օրմանեան. աշխարհական պատգամաւոր անուանի վաճառական Տիգրան Էֆէնտի Կիւմիւշկերտան:

ԵՐՈՒՍԱԳԵՄԷՆ. եկեղեց. պատգ. Սահակ Եպիսկոպոս Խաղայեան և աշխարհական պատգ. Յարութիւն Էֆէնտի Թորոսեան:

ՆԻԿՈՒՄԻԻՒՍԷԷՆ. Առաջնորդ Սահակմանու Եպ. Յովակիմեան և աշխարհական պատգ. Գառարար աղա Գառարեան:

ԾԻՒԻՒՆԻՍԷԷՆ. Առաջնորդ Ներսէս Վ. Ապրանեան և Փափաղեան Էֆէնտի:

ՊՐՈՒՍՍԷԷՆ. Առաջնորդ Բարդուղիմէոս Եպիսկ. Չամիչեան. իսկ Աշխարհական պատգ. դեռ յայտնի չէ:

ԱՆԳՐԻԱՆԱ-ՊՕԼԷՆ. Առաջնորդ Մեսրոպ Եպ. և Մաքսուտ Էֆէնտի Սանտաբեան:

ԿԱՐԻՆԷՆ. աշխարհական պատգ. ընտրուած է. Մ. Կարապետ Տէր Ազարեան իսկ եկեղեցական դեռ յայտնի չէ:

ՍԱՄՈՒԼ.



Բաւճաղ 30/11 Մարտ 1892

Առ

Պատուարժան խմբագրութեան «Գանուբ» անկողմակալ հանդիսի.

Մարտիկոյ Արմէնիա թերթի 62 – 63 թիւերու մէջ Շումլայէ գրուած յողումած մը կարգացի Պ. յողումածագիրն տեղւոյն Արական վարժարանի առաջին դաստաւ. Արք. Կարապետեանն անխորհուրդ և անհեթեթ ընթացքն կը պարզէր:

Վերոյիշեալ Արք. Կարապետեանն հայրենակիցս

իններով կը վաճառեմ լաւագոյնս ծանօթացնել իւր
 ԼՂ և ինչպիսի անձ լինելն 'ի տեղեկութիւն իւր
 պաշտպան ազգայնոց: Նորա բուն անունն է Պետ-
 րոս Մ, Պալմիտան բնիկ Պարտիզաւցի ու անցեալ
 1890 տարւոյ վերջէն քաղաքս հասաւ լոկ օրա-
 պահիկ մը ճարեւու համար, և երբ տեսաւ որ այն
 ատեններ աստ կուտակեցական պայքարներ կը մը-
 ղուին առիթէն օգուտ քաղելով հայրենասիրի և
 յեղափոխականի կեղծ դիմակն իր երեսի վրայ առ-
 ներով սխառ շորթել ու շոգսքորթել տեղւոյս ազ-
 ցայինները և նոյն իսկ յաջողեցաւ տեղւոյս «Հա-
 յոյ հայրենասիրաց Միութեան» ԼՂ-ին օթեա-
 կէն յանձնարարական մը ձեռք ձգել 'ի դիւրու-
 թիւն իւր 'ի Մարտէյլ ընելիք ուղեւորութեան ու-
 ըովհետեւ ինչպէս որ ըսի «ԼՂ» ջերմ փորձու-
 զարեանապաշտ մ'էր նոյն յանձնարարականով և
 կըօրիկ գումար մը տրուելով իրեն անցաւ Ռօմա-
 նիա, ճուրճէօի մէջ մեր այդ հայրենասէրը ժո-
 դովրդի քրտինքով հաւաքուած գումարը
 տան մը մէջ գողցուց, անկից նամակաւ դիմելով
 աստ իրեն օգնող ազգայնոց յաջողեցաւ երկրորդ
 անգամ գումար մը ևս ձեռք ձգել որով մինչեւ
 Պուքրէյ գնաց, ուր երկու ամսոյ չափ այն տեղ
 անբարոյական կեանք մը վայելէ յետոյ ուղեւո-
 րեցաւ դէպի Մարտէյլ, այն տեղ կը ներկայանայ
 Պ. փորձուգալեանի և պաշտօն մը կուզէ. պ. փոր-
 թուգալեան քաղաքավարական ընդունելութիւն մը
 անգամ չընէր, իւր ինքնակոչ կուտակցին, սա ճա-
 րարատեալ կը վերադառնայ գացած ճամբով, իւր
 նիւթականը հազիւ հազ մինչեւ վիէննա կը հաս-
 ցնէ զինքը, սովալուկ և գարշահոտեալ Դեֆէ-Է-
 ուր բարեսիրտ ազգային մը տեսնելով և խղճարով
 իւր թշուառ վիճակին վրայ բաւականաչափ գու-
 մար մը կը նուիրէ որով կը հասնի վերստին քա-
 ղաքս և անէծքներ տեղացիներով փորձուգալեանի
 գլխուն:

Բաւական ժամանակ աստանդական թափառելէն
 վերջ իր հայրենակից ք ցաւելով իւր վրայ ջանա-
 ցին բաւական համեստ մի գործ գտնել այն է Շում-
 լայի Ազգային վարժարանի «ԼՂ» դասատու ընել
 որ դարձեալ իր թեթեամտութեամբ և հոսիսու-
 թեամբը ամեն խաւերի մէջ քննադատութեան
 առարկայ եղաւ. ես իբր հայրենակից և բարեկամ
 ցաւելով իւր վիճակի վրայ գրեցի որպէս զի զգու-
 շանայ անխոհեմ ընթացից մէջ գտնուելէ. իսկ նա
 առ 'ի պատասխանի ներքակ հետեւեալ նամակն
 կը գրէ ինձ զոր ընթերցողք և զխաւարաբար Շում-

լայի իր կուտակիցներ կրնան գուշակել իւր ինչ-
 պիտի ոք լինելը:

Ահաւասիկ իւր ձեռագիր նամակը որ կը յանձ-
 նեմ խմբագրութեանդ:

«1892 26 Մարտ Շումլա»

«պ. Թաղւոր»

«Եղու'կ քեզ և ամօթ, որ ինձ դէմ՝ վատու-

«թեամբ այդ տեսակ թշնամութիւններ կը դաւես

«սակայն կը խրատեմ՝ քեզ և զբայրաբար, որ

«զգուշանաս այդ տեսակ ընթացքներէ դիտնա-

«լով որ քեզի պէս հաշտ մարդու մը հաջին-

«նեւրով Արտաշէսին մազն անգամ չշարժիր իւր

«տեղէն, թերեւ այդ ընթացքիդ համար այդպէս

«եղած ես, մի ընեւ մեզի որպէսզի չի գտնաս

«երկնքէն:

«Եւ զգուշացիր մ'էյ մ'ալ այդ տեսակ կոպիտ

«նամակ գրելէ, մեծ և վեհանձն մի անձնաւո-

«րութեան. ուրիշին գրչով»

«Բու աղեկութեանդ

ցանկացող կէս հայրենակիցդ»

Արտաշէս Կարապետեան

Ուստի կը խնդրեմ խմբագիր տէր ներկայս նոյ-
 նութեամբ հաճեցէք հիւրնկալել Ձեր անկողմնա-
 կալ թերթին մօտաւոր թիւերի միոյն մէջ որուն
 համար կանխաւ կը մատուցանեմ իմ խոնարհ
 յարգանքներս: [x]

Թաղւոր Ս. Խալիչեան

[x] Մարտ 28 թուով խմբագրութեանս մի նամակ իւր-
 կուած է Շումլայէ «Ուսանող մը» ստորագրութեամբ
 լով կիմացնէ թէ Ազգ. վարժարանի Տնօրէն դասատու
 պ. Արտաշէս Կարապետեանի աննշան եւ ազգալեւաս
 անձանց հակառակութեամբ կառավարութիւնը հրաժարե-
 ցուցած է պաշտօնէ պ. Արտաշէսն. եւ վարժարանի ու-
 սանողք մի խնդրագիր մատուցած են տեղւոյն թաղակ.
 խորհրդոյ որպէս զի դիմին կառավարութեան դարձեալ
 պաշտօնի կոչուելու համար պ. Արտաշէսն: Սոյն նամա-
 կը ամբողջութեամբ պիտի հրատարակէինք եթէ Պ. նա-
 մակագիրը իւր իսկական անունը եւ ստորագրութիւնը
 տար մեզ. այս կը պահանջէ լրագրական օրէնքը:
 Խմբ:

Պ. ՍԵՐՈՎԲԷ ԶԻՒԱՆԻ

Հետեւեալ «ԼՂ» արտագրել իմ յարգելի Աշու-
 խի տաղարանից, որը ուզում եմ ծանօթացնել
 «Դանուբը» ընթերցող մեր արտասահմանի եղբայ-
 րներին: Աշուխ Զիւան բնակվում է Ռուսաստան
 Ալէքսանդրապոլ քաղաքում, և լինելով Տաճկա-
 հայ երգչուհի գաղթականներից տաճկական տարի-

ների ընթացքում կարելի է տեսնել որ, «Է-Ի-Ի-Է-Է»
Հայացրել է. երգել է ու երգում է հայու մը
ճշմարիտ զգայունքովը:

Կ. Ջիւանի՝ ոչ Համարարան տեսել է. և ոչ էլ
լեզուի քերականութեան մէջ զարգացել է: Մի
հասարակ ընթերցանութիւն գիտէ և նա ալ ո՞վ
գիտէ որ կտաւագործ վարպետի մօտ վարժուել է
սակայն ինչպէս երևում է Կ. Ջիւանի՝ այդ հայա-
վայել ոգին ու խանդը ժառանգել է իրա պա-
պենական տնից. որը իրանց հետ գաղթեցրել են
Երզրումի շէնքէ: Լեռներից և Կ-Է-Է աւարտել է
ժողովրդական մեծ. շատ մեծ վարժարանին մէջ.
և որի մրցանակը. վարձատրութիւնը պէտք է լի-
նի ժողովրդի հասկացողութիւնը. ժողովրդի զնա-
հատութիւնը:

Պ. Ջիւանու +Է-Է-Է լարերը՝ խիտ շատ անգամ
քերուել ու քերվուել են Բագրատունիների պան-
ծալի յիշակերտի աւերակաց վերայ . . . ունի բազ-
մաթիւ երգեր, «-Է-Է-Է» յատկապէս տպուած ու
գիրք կազմուած, հետեւաբար յարգելի Աշուխին
ճանաչելու, և նրան քաջալերելու համար կարժէ
ամեն մի հայ ունենայ նորա գրքից մի օրինակ,
ինչպէս զարդ մատենադարանի, ինչպէս գրաւա-
կան Հայկական ներշնչումների:

Բանաստեղծը՝ իրա վսեմ սճերով ու բառագար-
ձութեամբ լեզուի և գրականութեան պճնազար-
դութիւնքն կը յաւելու, իսկ Ա-Է-Է ժողովրդի հետ
կը խօսի, նոր-«-Է-Է» եթէ չունին վարդի կարմրու-
թիւն: Սակայն ունին և կը կազմեն նորա բունը,
նորա արմատը:

ՎԷՏԷՐԱՆ

ԵՂԱԾ ԶԵՂԱԾ ՄԷԿ ՀԱՅԻԻ Է

Ժող, անպիտան, անգործ մարդը՝
եղած չեղած մեկ հաշիւ է՝
վնասիս անգոյն, աննոտ փայրը,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Ինչ? պատք է թող գիտաւորը,
որ միևնաջ կցնում է փորը,
տգեա՝ մոլի կարգաւորը,
եղած չեղած մեկ հաշիւ է:
չառ մարդոս ոտացն կացվն,
թիւ որ վատ է իւր դրացին,
հօրը համար տնայտը սրտին,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Ինքն է իւր քսակին գողը,
տանը վերայ մաշող հողը,
չոսող մարտոս համար փողը՝

եղած չեղած մեկ հաշիւ է:
Ներթիւնիւն ինչ? պատք է կիւ,
չքնդ ունից շունի բաժին,
կայրի համար սրտն շոտին,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Անտոնիսն տուր գովաւանք,
նա ինչ? գիտե պայտիսի կեանք,
անգամին պատիւ յարգանք՝
եղած չեղած մեկ հաշիւ է:
Մօտ է պիտիւնի կորուստը,
չորս շաւի կտուր է հագուստը,
ժլատ, անօգուտ հարստութիւն,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Կենդանի մարդուն է արժան,
պատիւ, յարգանք, շքանշան,
միտած մարդոս համար արժան:
եղած չեղած մեկ հաշիւ է:
Խելօք, հմուտ գիտնականը,
հիմքը ամուր կանգ տանը,
կիսատ, պատտ շինուած բանը,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Առաջ տղուն տուր երիւստ,
թոշի երթայ սարե, ի սար,
անոտք մարդուն հարթ ծանապարհ,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Շրանք շունին շնորհք ու շէնք,
գանգատելն է ևնցա օրհնք,
երկշունհարուն գրան ու զինք,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Կարիսն ազգն է ինքնին հնոց,
միշտ կարմակե կրակ ու բոց:
փախչող գործիք թերտ ու տխրաց,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Միկոյրին է հարկաւոր ջանք,
քանի որ հիւանդն ունի կե-Է-Է,
հոգեփայրիսի դեղ ու դարմանք,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Խեղճին ինչ? օգուտ իշխանը,
որ չի հասնի անդաժեմանը,
անտարբեր պառ ազգաւանը,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Երբոր սեղը գայ ճշմարիտ,
հարկաւոր չէ լինել կրկիտ,
գտակից յետոյ կարմիր հաւիթ,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Ուրախութեան օրը յատուկ,
կորաթաւան ծեր ու մանուկ,
հարաւանիքէն վերջը թըմբուկ,
եղած չեղած մեկ հաշիւ է:
Ջիւան, բարեսիրտ է յարմար,
չսեղ սիրով երգ ու քնար:
չառ ու դաժան մարդոց համար,
եղած չեղած մեկ հաշիւ է:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՐՈՒՆ

Հայկա՛կ ահա՛ ձմրան ցուրտ քողը մերկացաւ, ձիւնա-
թոյր ամպերն փարատեցան, սառնաշունչ քամիք մեզմա-
ցան, գետք եւ գետակք իւրեանց սառուցեալ ափունք-
ներէն զերծ ու ազատ՝ ընթացքին շարունակել սկսան
յորդաւատ, իսկ դու ու՞ր կ'ըթաս այսպէս յաւառատ
Հայկա՛կ:

Արտոյայք եւ դաշտք դալարագեղ ծիրեր արձակել
սկսան, արջառք բաւաշնչով եւ գառնք մայելով՝ դէպի
յարօտտակքն կը դիմեն, մաքիք՝ իւրեանց քաջ հովուն
սրնդի տխրայի ձայնին զմայլած կը կայտուն, գառնուկք
սիրտունք՝ մերթ ստտակով սիրուն դունչներին կա-
նանչազարդ մարգերուն վերայ քսելով՝ ճարակել կը կեղ-
ծեն, եւ մղրթ իրենց մարց կաթնաշուղխի տտանց առջեւ
ծունը դրած՝ ինթկելով կը ծծեն. դու որպի՞սի օգ կը
ծծես առա, ինձ Հայկա՛կ: — Օտարին . . .

Տե՛ս համայն բնութիւն նոր կեանք կ'առնուն, նոր ոգի
կը զգենու. տե՛ս ծիծիռնակը՝ հազարաւոր մղոն ծովորու
գետերու եւ ցամաքներու վրայէն սառառնութեւ սուրաք-
լով՝ իւր մայրենի բոյնը գտնելու կուզայ. է՛ր դու
Հայկա՛կ, քո լնիկ բոյնէդ հեռի՝ օտար կլիմայներու տակ
օտարին օգը ծծելով ման կուզաս այսպէս անտարբեր. . .

Ես նոգեհո եկայ քեզ նոր քաջա՛ւ աւետելու. հայկա՛կ,
է՛ր կը քնես, զարթի՛ր. վայելէ դու ալ այս կենսատու
եղանակը՝ զոր բնութեան հեղինակ քեզ համար այլ նու-
իրագործած է, փառաբանէ՛ այն ամենակարող հեղինա-
կը՝ որ համայն բնութիւն սգեւորելով՝ քեզ նաեւ կեանք
չնորձած է. որպէս զի վայելես եւ ուսանիս իւր հիանա-
լի գարնան հրաշալիքները:

Զարթի՛ր Հայկա՛կ, ա՛ռ դու ալ նոր կենդանութիւն,
զի բոլոր կենդանիք Ձէն տիեզերաց կը փառաբանեն.
արշալուսոյ հետ, դու ինչու այսպէս յաւելալ կը խորհաս
ի խոր քուն. արի՛, գնա՛ Անդէ՛ն տաճարին մօտ եւ ի
լսրտէ ունկնդիր լեր այն հիասքանչ երգին՝ զոր վաղ քաջ
բնոյ առաւտոն կ'երգէ ողբաձայն մեր հոգելից ներսէս
չնորձալին. «զարթիք փառք իմ զարթիք . . .»

Զարթի՛ր դու ո՛ր կոյս, զարթի՛ր Հայկա՛կ, անոյշ զե-
փուռն հետ եւ վայելէ այն կապոյտ աչերով կուսին,
ճանչալէն զովարար բուրումը, որ գլխին ի կոր՝ թերթն
ի թփին՝ հողին կը նային տխրագին, կարծես թէ իւր ա-
զու աչուկներն ի վեր յառածին պէս՝ իրմէ առաւել եւս
ծաւի աչերով գեղանի կոյս մը պիտի նշմարէ եւ նրա
քով ինքն դժգունելով պիտի չիկնի ամօթահար:

Զարթի՛ր Հայկուհի եւ տե՛ս ծաղկանց թագուհին, վարդը
չնչէ նրա անոյշ բոյրը, բայց անգութ ձեռք մի խլէր
մի՛ հպիր կը թօշնի, այրած սրտերու բարեկամը, սոխա-
կը կը տխրի որ գուրգուրալով ի թուփ վարդենեաց ման
կուզայ եւ կարօտակէզ կ'երգէ, կործես յաւերթ զայն ան-
թառամ պահելու տենչանք:

Զարթի՛ր, գէթ տնգամն ալ ուշ դիր, սիրուն պրլպու-
կին դայլայիկին, փարատէ սեւաւ մաղձերդ, զովացուր
լքեալ սրտիկդ եւ քաջալերուէ, զի քիչ ատենէն խոյս

պիտի դայ այն քաղցրախօսիկ թռչնիկն պէս ի տար աշ-
խարհ . . .

Ո՛հ, Հայկա՛կ, իցի՛ւ թէ ես ալ քեզի հետ պաշտէի
զԱստուած ի բոլոր սրտէ՛ ինչպէս Պըլպու՛ն զվարդ:

Իցի՛ւ թէ Հայկուհի, ես ալ քեզի հետ սիրէի համա-
տութիւնը՝ որպէս մանիշակն զպարկեշտութիւն:

Իցի՛ւ թէ Հայկա՛կ, ես ալ քեզի հետ շինել կարենայի
այն հայրենի աւերակներն՝ ինչպէս ծիծեռնակն իւր մայ-
րենի բոյնն:

ՆՈՒՆԷ.

1892 Մարտ 11

Ռուսճուգ

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Որախութեամբ յսեցինք որ Թիֆլիզի թեմա-
կան պատքամուտրի ընտրութեանները կատարուեր
է Մարտի ութին կիւրակի օր եւ քուէի առաւել-
ութեամբ ընտրուած են Պ. Արգար Յովհաննէս-
յան (Խմբ. «Արձագանք», թերթի եւ Պ. Սպան-
դար Սղանդարեան (Խմբ. «Նոր-Դար» ի կը շնոր-
հաւորեմք մեր տղնիւ պաշտօնակցած:

Շնորհակալութեամբ ստացանք Ռօմանիոյ Եաշ
քաղաքի Հայ ուսուցիչ եւ քաջ ուսմանագէտ Պ.
Լուսիկ Սրմայ աշեանի հետեւեալ վերնագրով մի
նոր հրատարակութիւնը Ռօմաներէն լեզու աւ «Պա-
տախտան աւ Պ. Ժորժ Արամը եւ Աւագ երէց Սթէ-
ֆան Բըրնիսքու ի մօտին՝ Հայ եկեղեցւոյ դէմ
գրութեան»: Սոյն գիրքը կը բաղկանայ 81 երես-
ներէ:

Կ. ՊՕԼՍՈՑ «ՀԱՅՐԵՆԻՔ» ԼՐԱԳՐՈՑ
ԴԱԴԱՐՈՒՄԸ

Կ. Պօլսոյ «Հայրենիք» լրագիրը դադարման դա-
տապարտուած է տպագրական տեսչութեան հե-
տեւեալ հրամանագրովն:

«Հայրենիք» «Հայրենիք» լրագիրն իր վերջին
թիւոյն մէջ կրկնակի պատուիրաց հակառակ տն-
պարտչած յօդուած մը հրատարակած լինելով ան-
պայման կերպիւ դադարման դատապարտուած է:

Նորին Ա. Բ. Պալիարիոյ Ֆէրտինանտ Իշխանը
3,000 ֆրանք հուլիսից ի նպատու վերին Մաճա-
ռիստանի սովեթներին համար. սոյն գումարը յան-
ձնուած է սովեթներին մասնաւորովին ի Բեշթա

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Մարտապահութիւն. մարդասպանութիւնը ընդհան-
րապէս տեղի կ'առնենայ վայրենի եւ բարբարոս ցի-

Ինչ է նոր տարին.

— Պզտիկ աղայ մը որ միշտ կը սիրուի.

Ինչ է բժիշկը,

— Գարբիէլ Նրեշտակապետի գործակալարը.

Ասոր ստացուածքը ինչ է.

— Մարգկանց մարմինը.

Բժշկին թշնամին ո՞վ է.

— ատողջութիւն.

Ինչ է օղին.

— վարպետ խօստովանահայր:

Անհաւատարիմ կինը ինչի կը նմանի.

— քծէն շեղող կառախմբի մը որ թէ

իւնն եւ թէ ուրիշին կը վնասէ:

Անիրաւութիւնը մօռնալ ու ներելը

առաքինի մարդուն վրէժխնդրութիւնն է:

Ագահ հօրը շուայ որդի կը վայելէ.

“ԴԱՆՈՒԲ” Ի ԴԱԴԱՐՈՒՄԸ:

Պաշտօնապէս իմաց արուած է խմբագրութեանս ղադրեցնել “Դանուբ” ի հրատարակութիւնը անպայման կերպիւ. այս առթիւ կը խնդրեմք մեր բոլոր թղթակիցներէ որ ղադրեցնեն իրենց թղթակցութիւնները:

ՊԱՏԻՍՃՈՒԳ
“ԴԱՆՈՒԲ” ԼՐԱԳՐՈՅ
 Ի ԲՈՒՍՃՈՒԳ [ՊՈՒԼԿԱՐԻԱ]

Պատիւ ունիմ՝ ծանուցանել արդոյ հասարակութեան թէ՛ տպարանիս մօէջ կը տպագրուի Հայերէն, Պուլկարերէն և Ֆռանսերէն լեզուներով ամեն տեսակ գործեր, ինչպէս են վաճառականական տեսարաններ, չըջարեական, առևտրական ցուցակներ, այցեատմաներ, ընկալազգրեր, հարսանեաց հրաւիրագրեր, մահազոյժի ազգեր և և. յաճախորդք կը հրաւիրուին գիմել խմբագրութեանս հասցէին:

Руссе, Споро-печатница на Спиро Гулабчев.

ՆՈՐ ԼՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՆ

ՆՈՐ ԲՆԱԳԻՏՈՒԹՅՆ

Ի ՊԵՏՍ

ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱՅ

Կ. Ս. ՀԱՃԻ ՍՏԵՓԱՆԻԱՆ

Նախկին աշակերտ Պիտրոսեան
 վարժարանի ի Պոլիս

ԲՈՒՍՃՈՒԳ

ՏՊԱԳՐ. Մ. Ս. ԹԻԹԻԻՆՃԻԷՅԻ

Ազգ. վարժարանաց համար պիտանի մի գրքոյկ է. կը լանձնարարեմք մեր ամեն տեղի Պատ. Դաստիարակաց որ նախակրթարանի աշակերտաց գաղաքար մը տալու համար բնագիտութեան վրայ, քաջայերեն մեծարոյ հեղինակին սոյն փոքրիկ գործն:

Կը վաճառի հեղինակին մօտ. գին 1 ֆր:

Փափաքողք պարտին գիմել հետեւեալ հասցէին՝

Mr. G. Hadji Stepanian

(BULGARIE)

CHOUMLA

ՆԱԽՈՒ ԳԻՐԲԵՐ

Հետեւեալ գիրքերն կը ծախուին «Դանուբ» ի խմբագրատան մէջ. իրենց առջեւ նշանակուած գիններով եւ փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով:

ԲԱՅՅԻ, ԽԵՆԹԸ (Արկածներ վերջին Ռուս. Թուրքական պատերազմից) և ԳԱՄԱՅԻԳԻՆ (Մի պատկեր նրա արշաւանքից). Երկուքը մէկտեղ մէկ հատորի յէջ ամփոփուած. Բ. Տրպ. 8 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ԿԱՅԼԵՆԻ ԿՏԱԿԸ 5 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ՄԻՆԸ ՍՅՍՊԷՍ, ՄԻԻՍԸ ՍՅՆՊԷՍ Պատկերազարդ վեպ. Թիֆլիսի վաճառականների կեանքից. 4 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ, ԿԱՅՅԵՐԻ ՎԵՐՋԸ 1 ֆր. 50 սանթիմ:

ԲԱՅՅԻ Պատկերը խոշորագիրը. 2 ֆր:

» » աւելի փոքրը. 1 ֆր:

ՏԵՐ ԵՒ ԽՄԵԱԳԻՐ Մ. Ս. ԹԻԹԻԻՆՃԻԷՅԻ

ԲՈՒՍՃՈՒԳ ՏՊԱՐԱՆ Մ. Ս. ԹԻԹԻԻՆՃԻԷՅԻ

